ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(ակադեմիկոս Մ. Կ. Զուլալյանի ծննդյան 80-ամյակի առթիվ)

Լրացավ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Մանվել Կարապետի Զուլալյանի 80 տարին: Ականավոր պատմաբանը ծնվել է 1930 թ., Սիրիայի Հալեպ քաղաքում, որտեղ և ֆրանսիական դպրոցում ստացել է իր նախնական կրթությունը: 1947 թ. նա հայրենադարձվել է Հայաստան, հաստատվել Գյումրի քաղաքում: Ավարտել է տեղի Մ. Նալբանդյանի անվ. մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը և ապա Երևանի Վ. Բրյուսովի անվ. ռուսաց և օտար լեզուների ինստիտուտի ռոմանո-գերմանական ֆակուլտետը: Մ. Զուլալյանը 1954 թ. ընդունվել է Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի ասպիրանտուրա: Հայրենադարձ շնորհաշատ երիտասարդների ընկերակցությամբ նա գործուղվելով Լենինգրադի համալսարանի Արևելագիտության ֆակուլտետ, ուսումնառության շրջանն անցել և գիտական գործունեության է պատրաստվել մի այնպիսի խոշոր գիտնականի ղեկավարությամբ, որպիսին ակադեմիկոս Հովսեփ Օրբելին էր:

Մ. Զուլալյանը թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է Լենինգրադում, 1960 թ., իսկ 1974 թ., երբ արդեն աշխատանքի էր անցել Հայաստանի ԳԱ Պատմության ինստիտուտում, մեծ հաջողությամբ պաշտպանում է դոկտորական ատենախոսություն: Պատմության ինստիտու-տում էլ նա ծավալեց իր արգասավոր գիտական գործունեությունը՝ մինչև 1988 թ. հոկտեմբեր: Այդ ժամանակից ի վեր, մինչև 2008 թ. նա զբաղեցնում էր Երևանի մանկավարժական համալսարանի համաշխարհային պատմության ամբիոնի վարիչի պաշտոնը, որբեղ և զբաղեցնում է պրոֆեսորական ամբիոն: 1990 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ՝ հայ պատմագրության, հայագիտության և արևելագիտության մեջ իր ներդրած ակնառու և պատկառելի վաստակի համար: Նույն գիտությունների մեջ նրա բաց արած նոր ուղղությունների հաստատումն էր ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսի կոչումը, որ նա ստացավ 1995 թ.:

Մ. Կ. Զուլալյանի ողջ գործունեությունը աչքի է ընկնում խոր գիտականությամբ, փաստական և աղբյուրագիտական հենքի բացառիկ հարստությամբ: Նրա աշխատություններում արդյունավետորեն են օգտագործված հայկական, օսմանյան, ռուսական, լատինական, ֆրանսիական և անգլիական աղբյուրներ: Հատկապես քաջ գիտակ է օսմաներենի, որը նշանակալիորեն նպաստել է նրա աղբյուրագիտական հետազոտությունն-ներին: Աղբյուրագիտական կարևորագույն արժեք ունի նրա «Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում (17-18-րդ դդ.)» (Երևան, 1964) ժողովածուն (Ա. Խ. Սաֆրաստյանի հեղինակակցությամբ), որը նշված թե-

մայի և ժամանակաշրջանի ուսումնասիրության առումով լուրջ նշանակություն ունեցավ հայագիտության հետագա զարգացման համար:

Մ. Զուլալյանի գրեթե յուրաքանչյուր աշխատություն առանձնանում է մեր պատմագրության մեջ առաջին անգամ կամ նորովի գիտական լուրջ վերլուծության ենթարկվող հիմնահարցերով, որոնք եզրափակվում են լայն ընդհանրացումներով: Դրա ցայտուն օրինակներից է նրա «Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի դրությունը Օսմանյան կայսրությունում» (Երևան, 1966) աշխատությունը: Այն վերաբերում է XVI դ. վերջի և XVII դ. սկզբի Թուրքիայի պատմությանը և այդ համատեքստում՝ Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքին, Օսմանյան կայսրության պատմության մեջ իր չափերով և ուժգնությամբ աննախընթաց՝ ջալալիների շարժման վերլուծության համադրությամբ: Ջալալիների շարժմանը գիտնականը տալիս է իր սեփական հետազոտությունից բխող և հիմնավոր բնութագիր, եզրակացնելով, որ այդ շարժումն արտացոլում էր Օսմանյան Թուրքիայի տնտեսական ու քաղաքական համակարգի խոր ճգնաժամը, Այս աշխատության մեջ աղբյուրագետի իր տաղանդով Մ. Զուլալյանը քննական վերլուծության է ենթարկում XVII-XVIII դդ. թուրք պատմագիրների (Փեչևի, Սոլակզադե, Նաիմա, Քյաթիպ Չելեբի և այլք) տեսակետներն ու նվաճողական պատմագրության թույլ տված անճշտությունները: Ջալալիների շարժման խորքային պատճառները և դրանցով պայմանավորված պատմական իրողությունները ներկայացնելով՝Մ. Զուլալյանը անդրադարձել է Արևմտյան Հայաստանի տնտեսական կացությանը, ցույց տվել նրա հայ բնակչության կեղեքված և իրազուրկ վիճակը օսմանյան բռնապետության պայմաններում: Ի լրումն այս ամենի, ասենք, որ նշված աշխատությունը էական կողմերով է բացահայտում թուրքական պատմագրության ազգայնական ուղղվածությունը: Թուրքական Պատմական ընկերության (Türk Tarih Kurumu) և նրա հրատարակած պատմագիտական աշխատությունների քննադատությամբ Զուլալյանը հանդես է գալիս որպես ժամանակի թուրքական պատմագրության միակողմանիորեն քաղաքականացված բնույթի և ազգայնամոլության առաջին հիմնավոր բացահայտողներից մեկը մեր պատմագրության մեջ: Մեր նշած հիմնախնդիրը առանձին և ամբողջական հետազոտության առարկա է դարձել նրա «Հայաստանի հին և միջին դարերի պատմության հարցերի լուսաբանումը արդի թուրք պատմագիտության մեջ» (Երևան, 1970, ռուս.) աշխատության մեջ: Հայ ժողովրդի պատմությունը նենգափոխելուն ուղղված թուրքական պատմագրության փորձերի բացահայտման տեսակետից աշխատությունն ունի, հիրավի, լայն ընդգրկումներ:

Մ. Զուլալյանը հանգամանորեն հետազոտել է Արևմտահայաստանի սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային իրականության հիմնահարցերը՝ «Հայաստանը 16-րդ դ. 1-ին կեսին» (Մոսկվա, 1971, ռուս.) և «Հայաստանը 16-18-րդ դարերում»(Երևան, 1975) մենագրություններում: Դրանցում լուրջ ուշադրություն է դարձված նաև Հայաստանում ազատագրական շարժումների պատմությանը, դրանք պայմանավորող գործոններին, ինչպես և դրանց առնչվող՝ Պարսկաստանի, Օսմանյան Թուրքիայի և Ռուսաստանի քաղաքական և ռազմական հարաբերություններին: Այս աշխատություններում հայերի ազատագրական շարժումները ներկայացվում և գնահատվում են իրենց բարդ ու հակասական ընթացքի, դավանական տարաձայնությունների և այս վերջիններին սերտորեն առնչվող՝ արտաքին ոչ միանշանակ քաղաքական կոմնորոշումների հիման վրա: Շարժումը կազմող քաղաքական ուժերի մեջ Մ. Զուլալյանը հիմնավորված ուշադրություն է դարձրել Հայաստանյայց եկեղեցու, նրա գործիչների

տեղին և դերին: Այս տեսանկյունից են գնահատվում Հակոբ Շամախեցի և Սիմեոն Երևանցի կաթողիկոսների գործունեությունը, ինչպես և այլ քաղաքական գործիչների՝ Հ. Էմինի, Հ. Արղությանի և այլոց դերը հայ-ռուսական հարաբերությունների, Հայաստանի ազատագրության գործում: Պատմագիտական համոզիչ վերլուծությամբ Մ. Զուլալյանը բացահայտում է հայ ազատագրական շարժման միասնական, համազգային բնույթը, որոշակի և առկա փաստերի տրամաբանությամբ հերքում ազգային շարժումը ըստ հատվածների և աշխարհագրական տարածքի տրոհելուն ուղղված վաղեմի կամ դեռևս հարատևող տեսակետները:

Մ. Զուլալյանը կարևորում է ժամանակի սկզբնաղբյուրների կարևոր նշանակությունը Հայաստանի միջնադարյան պատմության ուսումնասիրության մեջ: Այդպիսին է նրա՝ մի շարք արևելագետների համագործակցությամբ հրատարակած Էվլիյա Չելեբու «Սեյահեթ նամեն» (Մոսկվա, 1983, ռուս.): Այս գործը, իբրև սկզբնաղբյուր, լուրջ արժեք է ներկայացնում նաև հայագիտության համար, որովհետև պարունակում է հետաքրքիր տեղեկություններ ժամանակի Հայաստանի տնտեսական ու քաղաքական կյանքի վերաբերյալ, ինչպես և ընդլայնում է Հայաստանում Օսմանյան Թուրքիայի վարած քաղաքականության մասին մեր պատկերացումները:

Մ. Զուլալյանի հեղինակակցությամբ գրած աշխատություններից անպայման պետք է հիշատակել Ա. Հաջյանի հետ նրա հրատարակած «Ստամբուլի արհեստագործական արտադրությունը 17-րդ դ. առաջին կեսին»(Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ. Թուրքիա, X, Երևան, 1979, ռուս.) աշխատությունը: Այն ամբողջացնում է հայ արհեստագործների՝ օսմանյան մայրաքաղաքում ունեցած կարևոր տեղի և նշանակության մասին մինչ այդ առկա իմացությունը, այն արհեստագործների, որոնց բազմահմուտ և ամենաբազմազան աշխատանքի շնորհիվ էր, որ մի հայտնի չափով ապահովվում էր օսմանյան մայրաքաղաքի կենսագործունեությունը:

Հայաստանի միջնադարյան պատմության հարցերին Մ. Զուլալյանն անդրադարձավ նաև «Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, գիրք Ա, քաղաքական պատմություն» աշխատությամբ (Երևան, 1990): Այստեղ Հայաստանի և հայ ժողովրդի պատմության հանգուցային հարցերը լուսաբանվում են եվրոպացի հեղինակների դիտարկումների տեսանկյունից: Հետազոտության հիմքում ընկած փաստական հարուստ նյութը՝ ուղեգրական, վավերագրական և այլ բնույթի գործեր, մեծավ մասամբ ունի սկզբնաղբյուրի արժեք և շատ ուշագրավ տեղեկություններ է պարունակում Հայաստանի և հայ ժողովրդի մասին:

Մ. Զուլալյանը շարունակում է մնալ արդիական գիտնական՝ բառի իսկական իմաստով, որ իրավունք է տալիս նրա՝ նորի և ժամանակակցի որոնող և անհանգիստ միտքը: ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի պատվերով նա գրում է Օսմանյան կայսրության պատմությունը՝ սկզբնավորումից մինչև XIX դ. սկիզբը: ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի համար ևս նա պատրաստել և գրեթե ավարտին է հասցրել Օսմանյան կայսրության կազմում գտնվող Արևմտյան Հայաստանի քաղաքական և սոցիալ-տնտեսական պատմությունը, որ կընդգրկվի ինստիտուտի՝ առաջիկայում հրատարակվելիք հայոց պատմության քառահատորի 5 գլուխներում: Մատը միշտ հայագիտության զարկերակին՝ Մ. Զուլալյանն անմիջականորեն արձագանքում է լույս ընծայված նոր աշխատություններին՝ հատկապես գնահատելով դրանք իր արժեքավոր գրախոսականներում:

Մ. Զուլալյանը ավելի քան հինգ տասնամյակ հանրապետության բուհերում դասավանդել է և այսօր ևս Խ. Աբովյանի անվ. մանկավարժական համալսարանում շարունակում է դասավանդել հայոց և ընդհանուր պատմություն, Արևելքի նոր և նորագույն շրջանի պատմություն՝ շռայլորեն իր բազմակողմանի գիտելիքներն ու հարուստ փորձը հաղորդելով ուսանողներին՝ անգամ քննությունների պահին, և հասցնելով նորանոր երիտասարդ գիտական կադրեր:

Այսօր արդեն ութերորդ տասնամյակը լրացրած գիտնականը ունի շատ ծրագրեր, որոնց իրականացմանը կնպաստեն իր մեծ աշխատասիրությունն ու երիտասարդական ավյունը: Անսպառ կորով և գիտական նոր նվաճումներ ցանկանանք նրան:

ԽԱՌԱՏՅԱՆ Ա. Ա.
Պատմական գիտությունների դոկտոր